ՄԱՑՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ի հրավերով, Հանձնաժողովը՝ բաղկացած ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ, բանաստեղծ Ավետիք Իսահակյանից, ժողովրդական նկարիչներ՝ Մարտիրոս Սարյանից և Հակոբ Կոջոյանից, ճարտարապետության պրոֆեսոր Սամվել Սաֆարյանից, արվեստի վաստակավոր դործիչներ՝ ճարտարապետ Մարկ Գրիգորյանից ու քանդակագործ Սրա Սարգսյանից և Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի նախագահի տեղակալ՝ ճարտարապետ Վարազդատ Հարությունյանից, տեղում ծանոթանալով Ս. Էջմիածնի Մայր Տաճարի դրությանը՝ կազմեց սույն արձանագրությունը Տաճարի պահպանման, վերանորոգման և ռեստավրացիայի վերաբերյալ.

Հանձնաժողովը անհրաժեշտ է գտնում.

1. Վերոհիշյալ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման համար ստեղծել մշտական գործող հանձնաժողով Վեհափառի նախագահությամբ.

2. Հանձնաժողովին իրավունք վերապահել կազմելու լրացուցիչ ենթահանձնաժողովներ, ինչպես և հրավիրել առանձին մասնագետներ, Տաճարի վերանորոգման և ռեստավրացիայի հետ կապված առանձին հարցերի ուսումնասիրման և մշակման համար, որոնց եզրակացությունները ենթակա են քննարկման և հաստատման մշտական Հանձնաժողովի կողմից։

3. Նախնական դիտողությունների հիման վրա Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում կատարել հետևյալ աշխատանքները Մայր Տաճարի վերանորոգման ուղղությամբ։

ա) Ձեռք առնել տեխնիկական լուրջ միջոցառումներ Տաճարի շրջակա գմբեթակիր սյուների, ինչպես և հյուսիսային, հարավային և արևմտյան պատերի ամրացման համար, որոնք վտանգում են Տաճարի կայունությունը։

բ) Սալահատակել Տաճարի հատակը և որոշ բարձրությամբ երեսապատել բարձրորակ հղկված քարերով ներքին պատերն ամբողջ պարագծով.

գ) Վերակառուցել հարավային և հյուսիսային խորանների շքամուտքերը, կառուցելով նոր շքամուտքեր մարմարից՝ հայկական ճարտարապետական ոճով.

դ) Վերակառուցել հարավային և հյուսիսային դասերում գտնվող սեղանները, կառուցելով նրանց փոխարեն նոր սեղաններ մարմարից.

ե) Տաճարի նախաբեմը մյուս մասից անջատող մետաղյա ցանկապատը փոխարինել նորով, պատրաստված բրոնզից՝ հայկական օրնամենտիկայի մոտիվներով.

զ) Բոլոր պատուհանների համար պատրաստել նոր շրջանակներ և ցանց ձուլածո բրոնզից։

է) Գմբեթի թմբուկի ներսում գտնվող շրջանաձև հարթակի համար պատրաստել նոր ճաղեր բրոնզից։

ը) Հնարավոր համարել կազմված նախագծերի համաձայն որոշ վերափոխումներ կատարել ներքին ճարտարապետական ձևերի նկատմամբ, նրանց ավելի լավ տեսքի բերելու համար.

թ) Հատուկ արված նախագծերով պատրաստել նոր բրոնզե ջահեր և մոմակալներ.

ժ) Պահպանել և ռեստավրացիայի ենթարկել Տաճարի գմբեթում, կամարների և թաղերի վրա հայ նկարիչ Հովնաթան Նաղաշի կողմից արված զարդանկարները.

ժա) Մնացած հարթությունների վրա անել նոր որմնանկարներ և այլ զարդեր, օգտվելով ամբողջովին հայկական մանրանկարչության մոտիվներից՝ Հոգևոր Խորհրդի կողմից մշակված թեմաներով.

ժբ) Տաճարի ծածկը խոնավությունից

պահպանելու համար, ողջ կտուրը ծածկել թիթեղով.

ժգ) Վերակառուցել Տաճարի շուրջն եղած մայթերը, տուֆ քարերը փոխարինելով բազալտով.

ժդ) Վերանորոգել արտաքին պատերի ճարտարապետական պրոֆիլների վնասված մասերը և կատարել որոշ փոփոխություններ հետագայում արված պատուհանների և այլ ձևերի նկատմամբ։

4. Մայր Տաճարի վերանորոգման և ռեստավրացիայի ուղղությամբ կատարվելիք աշխատանքների վերջնական թվարկումը կազմելուց հետո անհրաժեշտ համարել կազմակերպել մասնագետների մի կոմպլեքսային բրիգադ, որին հանձնարարել կազմելու շինարարական-տեխնիկական և ճարտարապետական ձևավորման նախագծերը, ինչպես և աշխատանքների նախահաշիվը։

5. Տաճարի տեխնիկական դրությունը ստուգելու, կատարվելիք աշխատանքների թվարկումը կազմելու, ինչպես և նախագծման բոլոր տվյալները պատրաստելու ու նախահաշիվ կազմելու համար առաջադրել մասնագետների հետևյալ կազմը.

1. Հարությունյան Վ.—Ճարտարապետ-հնագետ
2. Ռոստոմբեկյան Խ.—Ճարտարապետ
3. Սարգսյան Ա.—Ինժեներ-կոնստրուկտոր
4. Մարտիրոսյան Ա.—Ինժեներ-շինարար
5. Ահարոնյան Ա.—Ինժեներ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ
Մ. ՍԱՐՅԱՆ
Հ. ԿՈՋՈՅԱՆ
Ս. ՍԱՖԱՐՅԱՆ
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հոկտեմբեր 21 1945 թ.
Փ. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման և ռեստավրացիայի նպատակով հրավիրված տեխնիկական ենթահանձնաժողովը՝ բաղկացած Հայաստանի Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի նախագահի տեղակալ՝ ճարտարապետ Վ. Հարությունյանից, ՀՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին կից շինարարական տրեստի գլխավոր ինժեներ Ա. Մարտիրոսյանից, ճարտարապետներ Ռ. Իսրայելյանից ու Խ. Ռոստոմբեկյանից և ինժեներ-կոնստրուկտոր Ա. Սարգսյանից, զննելով Տաճարի դրությունը՝ կազմեց սույն արձանագրությունը հետևյալի մասին.

1. Մայր Տաճարի գմբեթակիր սյուների, որոշ պատերի և ծածկերի քայքայման հիմնական պատճառը հանդիսանում է տանիքից ծծված ջուրը, որը թափանցում է կոնստրուկցիաների մեջ տանիքի սալապատված հարթության կարերի միջով և դրա հետևանքով առաջացած խոնավությունը։ Ելնելով վերոհիշյալից ենթահանձնաժողովը անհրաժեշտ է համարում նախ և առաջ կատարել աշխատանքներ ամբողջ շենքը խոնավությունից մեկուսացնելու ուղղությամբ։

2. Որպես տանիքը ծածկելու նյութ, ենթահանձնաժողովը նպատակահարմար է գտնում հանձնարարել մեկ միլիմետր հաստություն ունեցող պղնձե թիթեղ, որը տանիքի թեք մասերում միացվելու է ծալքերի միջոցով, իսկ թանգարանի կտրի համեմատաբար հարթ մասում՝ զոդման միջոցով։ Տանիքի ծածկի համար պղնձյա թիթեղ օգտագործելու հիմնական դրդապատճառը հանդիսանում է նախ այն, որ այդ թիթեղներին հնարավոր է, առանց ներկելու, քիմիական մշակման միջոցով Տաճարի պատերին ներդաշնակ գույն տալ, որպիսի ծածկը դրա հետ միասին կլինի բավականաչափ դիմացկուն և տևական։ (Ամբողջ ծածկի համար անհրաժեշտ կլինի մինչև 15 տոննա պղնձի թիթեղ)։

3. Տաճարի թիթեղապատումը ավարտելուց հետո անհրաժեշտ է անմիջապես բնական չորացման միջոցով վերացնել պատերի, ծածկի կոնստրուկցիաների և այլ մասերում

եղած խոնավությունը, որից հետո միայն հնարավոր է անցնել ներքին ծեփերի վերանորոգման, որմնանկարների restavրացիային, ինչպես և հարդարման ու այլ տեսակի աշխատանքներին։

4. Տաճարի հյուսիսային, հարավային և մասամբ արևմտյան պատերին առաջացած որոշ ճեղքերը հետևանք են ոչ թե հիմքի նստվածքի, այլ նրանք տեղական բնույթ ունեն և ամենայն հավանականությամբ արդյունք են պատի զանգվածի մեջ ներթափանցած խոնավության։ Ուստի և այդ ճեղքերը չեն կարող դիտվել որպես Տաճարի կայունությանը անմիջական վտանգ սպառնացող երևույթներ (նամանավանդ, որ տարիների ընթացքում կատարված դիտողությունները ցույց են տվել, որ ճեղքերը չեն լայնանում)։

Ենթահանձնաժողովը նպատակահարմար է գտնում. հանձնարարել այդ ճեղքերի ամրացումը շաղախի ներարկման (ИН'ЕКЦИЯ միջոցով, որպիսի միջոցառումը ի վիճակի է ապահովել պատի կայունությունն ու ամրությունը։

5. Տաճարի վնասված ու քայքայված արտաքին քիվերը անհրաժեշտ է վերանորոգել։

6. Առանձնապես լուրջ ինժեներական միջառումների կարոտ են Տաճարի շորս գմբեթակիր սյուները, որոնք ունեն վտանգավոր ճեղքեր և որոնցից փաստորեն կախված է ողջ Տաճարի կայունությունը։ Ենթահանձնաժողովը նպատակահարմար է գտնում այդ սյուներն ամրացնել երկաթի ուղղաձիգ և հորիզոնական կապերի միջոցով՝ սկսած հիմքից մինչև կամարների կրունկները։

Այդ կապերը հանձնարարվում է կատարել հետևյալ կերպով. գմբեթակիր սյուների բոլոր շորս ճակատներին փորել ուղղաձիգ ակոսներ, որոնց մեջ տեղավորել երկտավր երկաթներ, ապա ամրացնել դրանք հակադիր կողմերում դրված նույնանման երկաթների հետ երկաթե ձգանների միջոցով։ Սյուների մեջ կատարվող տարանցիկ անցքերը պետք է բացել միմիայն պերֆարատորների միջոցով, սյուներն անցանկալի հարվածներից զերծ պահելու նպատակով։ Այսպիսով Տաճարի շորս գմբեթակիր սյուները ամրացվում են երկաթե կմախքով, որը սակայն արվում է նրա գոյություն ունեցող չափերի սահմաններում միայն։

7. Նկատի ունենալով, որ գմբեթակիր սյուների մեջ առաջացած ճեղքերի հետևանքով, սյուների զանգվածում հնարավոր են դատարկ տարածություններ առաջացում, ուստի նպատակահարմար գտնել նրանցում կատարել շաղախի ներարկում (ИН'ЕКЦИЯ)։

8. Տաճարի ներսի սալահատակումը կատարել ասֆալտի շերտի վրա՝ գետինը խոնավությունից զերծ պահելու, ինչպես և Տաճարի ներսում տաքությունը ապահովելու նպատակով։

9. Վերոհիշյալ աշխատանքները կատարելուց առաջ երկաթ-բետոնով ուժեղացնել գմբեթակիր սյուների հիմքերը և անհրաժեշտության դեպքում ամրացնել պատերի հիմքերը երկաթ-բետոնե շաղախի միջոցով։

10. Տաճարի հարավային և հյուսիսային խորանների տանիքների ծածկը ամբողջովին վերանորոգել։

11. Տաճարի շուրջն եղած մայթերը, բացառելով քարերով սալահատակելուց առաջ նրանց տակը փռել ասֆալտե շերտ, հնարավորություն չտալու համար ջրերին ներթափանցելու Տաճարի հիմքերը։

12. Ցանկապատել Մայր Տաճարի բակը այն մասերում, որտեղ բացակայում են այդպիսիք։ Ողջ բակը բարեկարգել, կանաչազարդել և պատրաստել նոր զուգարաններ։ Այդ կապակցությամբ տանել ջրմուղու և կոյուղու գծեր։

ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Ճարտարապետ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ինժեներ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ճարտարապետ Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Ճարտարապետ Խ. ՌՈՍՏՈՄԲԵԿՅԱՆ
Ինժեներ-կոնստրուկտոր Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Նոյեմբեր 11 1945 թ
Ք. ԷՋՄԻԱԾԻՆ

ՄԻ ԷՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՋՄՎԱԾ ՆԱԽԱՀԱՇՎԻՑ

№ ըստ կարգի	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Աշխատանքի քանակը	Գինը	ԳՈՒՄԱՐԸ
1	Հատակի ռալաքարերի հանում	մ 2	2085,0	3,69	7693,65
2	Հիմքերի տակը փորելը	մ 3	224,0	14,87	3330,88
3	Հիմքերի ամրացումը երկաթ-բետոնով	մ 3	124,4	414,64	51581,22
4	Հատակի և մայթերի տակը տափակացնելը	մ 2	2085,0	22,20	46287,00
5	Հատակի սալապատումը մաքուր հղկված բազալտով	մ 2	2085,0	388,52	810064,20
6	Մյուսների ամրացումը	պ. մ	31,0	539,19	16714,19
7	Պանելների երեսպատումը հղկված մարմարյա սալակներով	մ 2	210,0	576,85	121138,50
8	Շքամուտքերի քանդումը	մ 3	37,0	17,44	645,28
9	Նոր շքամուտքերի կառուցումը հատուկ նախագծով	մ 2	36,0	1500,00	54000,00
10	Հատակի երեսպատումը մարմարյա սալակներով	մ 2	140,0	539,49	64738,90
11	Աստիճանների երեսպատումը մարմարյա սալակներով	պ. մ	17,0	576,85	9806,45
12	Արտաքին պրոֆիլների երեսպատումը	պ. մ	230,0	232,48	53465,80
13.	Երկաթ-բետոնե ծածկի հանումը	մ 2	100,0	3,21	321,00
14	Երկաթ-բետոնե անձող ծածկի կառուցումը	մ 2	100,0	61,86	6186,00
15	Տանիքի կառուցումը պղնձյա թիթեղներից - 1 մմ	մ 2	1620,0	170,00	275400,00
16	Բրոնզյա վանդակապատի կառուցումը	մ 2	126,5	400,00	50600,00
17	Պատուհանների ապակեշրջանակների կառուցումը	մ 2	86,0	197,18	17047,48
18	Զահերի պատրաստում	հատ	12,0	10000,00	120000,00
19	Մոմակալների պատրաստում	հատ	14,0	3000,00	42000,00
20	Տեսքի վերանորոգում	մ 2	5330,0	7,19	38322,70
21	Նոր տեսքի վրա նոր արմատների նկարումը	մ 2	2800,0	300,00	840000,00
22	Առաստաղի և կամարների նկարների վիրակապումը.	մ 2	450,0	200,00	90000,00
23	Պատուհանների յուղանկում	մ 2	86,0	21,83	1877,38
24	Երկաթվանդակյա ցանկապատի կառուցումը	պ. մ	124,0	335,72	41629,28
25	Բակի կանաչապատումը	մ 2	21000,0	12,00	252000,00
26	Նոր դուզարանի կառուցումը	մ 3	120,0	96,00	11520,00
27	Զրմուղ և կոյուղի	պ. մ	700,0	40,00	28000,00
28	Գյանող հորերի փորում	հատ	2,0	12000,0	24000,00
					3073360,91
	Վերադիր 23%				706925,05
					3780391,96
	Տեխ. փաստաթղթերի ձևակերպում 0,2%				7572,78
	Տեխ. վերահսկողություն 1%				37863,95
	Չնախատեսված այլ ծախսեր 2%				75727,90
	Ընդամենը				3907559,59